ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«23» փետրվարի 2017 թվականի N 79-Ա ք.Գյումրի

ՄԵՐՈՒԺԱՆ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 46-րդ կետի 2-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N:319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման)» կարգի 34-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Նոր Ախուրյանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2017 թվականի փետրվարի 14-ի նիստի թիվ 7 արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի դրական եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2017 թվականի փետրվարի 24-ից դադարեցնել Մերուժան Սահակյանի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Նոր Ախուրյանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի լիազորությունները և նրան նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Նոր Ախուրյանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 (հինգ) տարի ժամկետով:

Հ.ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է